

Բժ. Լ. Ո. ԿԱՆԵՎԸՆԿԻ

ԱՅԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌՈՂԶՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՒՄ

ՍԱՄԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ  
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌՈՂԶՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆՅՈՒԹԵՐ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ  
ՅԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ

614(47)  
5-20

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1939

20 JUL 2010

614(47)

ԲԺ. Լ. Ո. ԿԱՆԵՎԸԿԻ

4-20 ԿՐ.

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՁՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՑԵՐԿՐՈՒՄ

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ  
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՌՈՂՁՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆՅՈՒԹԵՐ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ  
ՅԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ

3534


17.05.2013



3993

39

Д.-Р. Л. О. Каневский  
Охрана здоровья трудящихся  
в стране Советов  
Гиз. Арм. ССР, Ереван, 1939



ՍՏԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ  
ՀՊԳԱՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՅԵՎ ՆՐԱ  
ԱՌՈՂՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ստալինյան Սահմանադրությունը ավեց Խորհրդագործության Միության ժողովուրդների քսան տարվա հերոսական պայքարի հանրագումարը։ Մեր գարաշրջանի այդ փաստաթղթի մեջ զբի յեն առնված մեր յերկրի պատմական հաղթանակները, վորոնք լինինի—Ստալինի կուսակցության զեկավարությամբ ձեռք են բերված սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում։

Ստալինյան Սահմանադրությունն ամբողջ աշխարհի աշխատավորությանը ցույց է տալիս, վորմիայն խորհրդային իրավակարգն և այն իրավակարգը, վորը հաստատապես ապահովում է աշխատավորմասների նյութական բարեկեցության անշեղ աճը, նրանց առողջության ամրապնդումը, կուլտուրայի աճը, բերկրավլի, առույգ ու յերջանիկ կյանքը։

ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նշանակությունը չի կարելի ավելի լավ բնորոշել, քան այդ արեց նրա ստեղծողը, սոցիալիստական հեղափոխության հանձար ընկեր Ստալինը։



«Իտ կլինի, — ասում եր նո իր զեկուցման մեջ\*), — մի պատմական փաստաբուղը, վարդ պարզ ու սեղմ, համարյա տրձանագրական վաճռվ, կխոսի ԽՍՀՄ-ում սոցիսլիզմի տարած հաղբուրյան փաստերի մասին, կապիտալիստական սուրբուրյան ԽՍՀՄ-ի աշխատավաների ազատագրման փաստերի մասին, ԽՍՀՄ-ում ծավալուն, մինչեւ վերջը հետեւողական դժմոկրտիքի հաղբուրյան փաստերի մասին»:

Դա կլինի մի փաստաբուղը, վորը կվկայի, թե այն, ինչի մասին յերազել են յեվ տարաւնակում են յերազել միջինավագ ազնիվ մարդիկ կտակիտական յերկրներում, — արդեն իրականացվել ե ԽՍՀՄ-ում:

Դա կլինի մի փաստաբուղը, վորը կվկայի, թե այն, ինչ վոր իրականացված է ԽՍՀՄ-ում, լիսին կարող է իրականացվել նոել մյուս յերկրներում»:

Հոդատարությունը մարդու նկատմամբ, նրա կյանքի ու առողջության նկատմամբ կարմիր թելի պես անցնում և ամբողջ Ստալինյան Սահմանադրության միջով։ Վորովհեան ԽՍՀՄ-ն աշխարհում միակ յերկիրն է, վորտեղ աշխատավորների առողջության շահերը հակառության մեջ չեն նրա սոցիալ-տնտեսական ոիստեմի հետ։

Սահմանադրության 1-ին հոդվածն ասում է։ «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետուրյունների Միուրյանը բանվաների յեվ զյուղացիների սոցիստական պետուրյուն ե»։

\*) Ի. Ստալին. — Զեկուցում ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին, Հայկուհատ, Էջ 66։

Սա նշանակում է, վոր վոչնչացված և աշխատավորների առողջացման ձանապարհն յեղած ամենագլխավոր խոչնդությունը՝ կապիտալիզմը։

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիզմը քայլայում և մարդկությունը։ Տաժանակիր աշխատանքով ու գործադրկությամբ, քաղցով ու հյուծվածությամբ, պոռնկությամբ ու ալկոհոլիզմով, սիֆիլիսով ու տուբերկուլյոզով նամիլինավոր աշխատավորների մատնում և վաղաժամ մահվան և այլառերման։ Պարազիտների ու վոճագործների մի չնչին խմբի շահույթի համար կապիտալիզմը կողոպառում և աշխատավորների առողջությունը, նրանց յերկատարարությունը։

Կապիտալիզմին ոտար և աշխատավորների առողջության նկատմամբ հոգատարությունը։ Կապիտալիստական արտագրությունը վիթխարի հրեշի նման գործարանների ու Փարբիկաների մեջ և քաշում միլիոնավոր տղամարդկանց, կանանց ու յերեխաների, ծծում և նրանց ամբողջ ուժը և հետո զուրս շպրտում ու թողնում բախտի քմահաճույքին։

Բժշկականությունը կապիտալիստական յերկրներում ապրանք և, վոր վաճառում և բժիշկը և գընում և հիվանդը։

«Ամբողջ կապիտալիստական տշխարհում, — ասում եր Մ. Ի. Կալինինը խորհուրդների Համառուսական 16-րդ համագումարում, — բաւժում են միայն հարուստերին։ Այնուղիւ բժշկի ուշադիր վերաբերմանը դեպի նի-

վանդր կանխորոշվում ե դրամի այն գումարով, վար հի-  
վանդր վնարում ե բժեկին):

Հսկայական միջոցներ ծախսելով սպառազին-  
ման վրա՝ փաշիզմի յերկրները խիստ կրճատել են  
առողջապահության ծախսերը, դրանով իսկ ի չիք  
դարձնելով աշխատավորների առանց այն ել թույլ  
զարգացած բժշկական սպասարկումը:

Միայն ավերիչ համաձարակների ահը, վախը  
սեփական առողջության համար ստիպում են կապի-  
տալիստներին նվազագույն ծախսեր անել առողջապա-  
հության համար: Բուրժուական պետության վերաբեր-  
մունքը դեպի աշխատավորների առողջության սպահա-  
նումը պերզ արտահայտվեց Մեծ-Բրիտանական բժըշ-  
կական ասոցիացիայի փոխհամագույն Զեմս-Բարբի յե-  
լույթի մէջ. «Պետությունը չպետք եռ ոգնի հիվանդներին: Այդ նրա գործը չե: Հիվանդը հետաքրքրություն է ներ-  
կայացնում միայն իր հարազատների, բժշկի և դեղա-  
վաճառի համար: Յեթե պետությունն ավելորդ փող ունի,  
հարկավոր ե ծախսել նրա համար, վորպեսզի ուժեղ-  
ները, առողջներն ու համարձակներն ավելի լավ ապ-  
րեն»:

Կապիտալիստական առողջապահության այդ դա-  
ստակարգային բնույթը ցայտուն արտահայտություն  
դարձ փաշիզմի յերկրներում, վորտեղ աշխատավոր-  
ների դաժան շահագործումը, աղքատությունն ու քա-  
ղաքական ճնշումը սոսկալի չափերի յին հասնում:  
Այդ պատճառով չկա վոչինչ զարմանալի, վոր կապի-  
տալիստական յերկրներում աշխատավորների վործա-  
զրկության, աղքատության, կյանքի ցածր մակարդա-

\*) «Պրավդա»—24 հունվարի 1935 թ.

կի հետ միասին աճում ե մահացությունը, նվազում  
ե ծննդաբերությունը, պակասում բնակչության աճը,  
վատթարանում բնակչության ֆիզիկական դրությու-  
նը, աճում ե պոռնկությունը:

Ինաստանում ծննդաբերության խիստ նվազում  
ե նկատվում: Յեթե 1930 թվին մեկ հազար բնակչին  
ընկնում եր 17 ծնունդ, ապա 1935 թվին այդ թիվը  
իջնում ե մինչև 12,1-ի\*):

Բնակչության բնական աճն իտալիայում 1936  
թվին հազար բնակչին 10,3 եր, 1937 թ. պակասել  
ե մինչև 6,6: Պաշտոնական տվյալների համաձայն,  
փաշիստական Գերմանիայի 100 խոշորագույն քա-  
ղաքներում բնակչության աճը 1937 թվին, 1936 թվի  
համեմատությամբ, յերեսուն տոկոսով պակասել է:

«Հիվանդանոցային դրամարկղների տվյալների  
համաձայն, Գերմանիայի բնակչության մեջ  
հիվանդացումը տարեցտարի աճում է: Այսպես, 1924  
թվից մինչև 1929 թվի շրջանը, վորը զուգագիպում  
ե ուժեղացած կապիտալիստական ոացիոնալիզացիայի  
ժամանակաշրջանին, տալիս ե հիվանդության 33%  
բարձրացում: 1932 թվից մինչև 1936 թիվը (փա-  
շիստական տիրապետությունը) գերմանական բան-  
վորների հիվանդացումն աճել է 40,9%—ով»\*\*):

1937 թ. հրապարակված պաշտոնական հաշվե-  
ալության համաձայն, բժշկական ոգնությունը փա-  
շիստական Գերմանիայում կրճատվել է 7,3 տոկո-

\*) «Պաճրագործության աճումը Լեհաստանում», «Պրավդա»,  
16 փետրվարի 1937 թ.

\*\*) Ս. Զամկով.—«Պետական սոցիալական ապահովագրու-  
թյունը ԽՍՀՄ-ում», «Տրուդ», 4 հունվարի 1938 թ. № 3

սով, հիվանդանոցային սպասարկումը՝ 11 տոկոսով, առամբարուժական ոգնությունը՝ 20, 6 տոկոսով։ Սըրանք միայն պաշտոնական հաշվետվության տվյալներն են։

Դերմանիայի առանձին քաղաքներում գեղատըները հրաժարվում են դեղ բաց թողնել «վոչ արիացի» հիվանդներին։

Խորհրդային յերկիրը վոչնչացրել և միլիոնավորների առողջության սխտեմատիկ քայլայման հիմնական ազգյուրը—կապիտալիզմը։

ԽՍՀՄ-ում վոչնչացված և շահագործումը, զերացված են պարագիտային դասակարգերը, վոչնչացված և մասսաների գործազրկությունն ու աղքատությունը և հենց զբանով ստեղծված են բոլոր նախադիմաներն աշխատավորների լայն առողջացման համար։

Մարդու նկատմամբ, աշխատավորների առողջության նկատմամբ այդ մեծ հոգատարության մարմացումը և պսակավորումն և հանդիսանում ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը՝ սոցիալիզմի Ստալինյան Սահմանադրությունը։

Քաղաքների վերակառուցման ու առողջացման ուղղությամբ, նոր, հարմար, առողջ բնակարանների շինարարության ուղղությամբ և աշխատավորներին կապիտալիզմից ժառանգություն մնացած նախկին վողորմելի խրճիթներից ու նկուղներից այնտեղ տեղափոխելու վերաբերյալ խորհրդային իշխանության բոլոր ձեռնարկությունները և աշխատավորների մասը, աշխատավորների առողջությունն ամրապնդելու համար։

ամուր հիմք են ստեղծել աշխատավորների առողջությունն ամրացնելու համար։

Բավական և նշել փոք խորհրդային իշխանության գոյության յերկու տաճյակ տարիների ընթացքում կառուցված և 60 միլիոն քառակուսի մետր նոր բնակարանային տարածություն։ առ կաղմում և ամբողջ պետական բնակելի ֆոնդի 40 տոկոսը։ Այս բոլորն աշխատավորական լայն մասսաների մեծագույն սեփականությունն եւ Վերջապես մեր գործարաններն ու ֆաբրիկաներն իրենց սանիտարահիգիենիկ բարեկարգությամբ և անվտանգության տեխնիկայով կապիտալիստական յերկրների գործարաններից տարբեկում են, ինչպես ցերեկը՝ գիշերից։ Սոցիալիստական ձեռնարկություններին կից սարքավորված են հիանալի հանգստի սենյակներ, ճաշարաններ, մանկամսուրներ ու մանկական հրապարակներ, գուշի սենյակներ, կինո, ուղիության այլն։ Մեր գործարաններն ու ֆաբրիկաներն ըստ եյության կուլտուրայի ոջախներ են։

Ստալինյան Սահմանադրության մի շարք հոգվածներ սերտ առնչություն ունեն առողջապահության պահպանման հարցերի հետ, տալով հիմնական քաղաքամեջ առողջապահական միջոցառումների համար, աշխատավորների առողջությունն ամրապնդելու համար։

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԵԶ ՄՈՏ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄՈՏ

Աշխատանքի իրավունքը կապիտալիզմի պայմաններում նշանակում է շահագործվելու «իրավունք»։

անհույս, ուժասպառ անող, սարսափելի գործարանաշ-  
յին ստրկացման «իրավունք»:

Կապիտալիզմի յերկրներում, ֆաշիզմի յերկրնե-  
րում աշխատանքի իրավունքը բանվորների և գյու-  
ղացիների համար նշանակում է քաղցի իրավունք:

Գիտական կոմունիզմի մեծ հիմնադիր Կարլ  
Մարքսը ցույց տվեց, վոր կապիտալն անդութիւն բան-  
վորների առողջության ու կյանքի նկատմամբ: Կա-  
պիտալիստական յերկրներում միանդամայն անհնար  
և լոյն կերպով առողջացնել աշխատանքի և կենցաղի  
պայմանները, քանի վոր այդ առողջացման միջոցա-  
ռումները հոկայական միջոցներ են պահանջում, վոր-  
ովիսիք կապիտալիստները չեն ուղղում ծախուել: Կա-  
պիտալիստը շահագրգուված չե բանվորների առողջու-  
թյան պահպանության գործով:

Նրան ծառայելու համար միշտ ել գործազուրկ-  
ների մի հոկայական բանակ կա, կապիտալիստն ա-  
մեն բողեք կարող և փողոց շպրտել հիվանդացած բան-  
վորին կամ բանվորունուն:

Կապիտալիստական պետության մեջ աշխատան-  
քը ծանր, աշխանակիբ պարհակ եւ: Մեղ մոտ առաջ,  
ատեղծագործական, ուրախ աշխատանքը յուրաքան-  
չյուր մարդու պահանջն է դարձել:

Ամենանետավարը մրցակցուրյան մեջ կտյա-  
նում է նրանում, վոր նա արվածական հեղաշրջում  
և կտարաւմ մարդկանց հայացքներում աշխատան-  
քի մասին, վարպինետեղ նա աշխատանին ամո-  
քալի յեվ ծանր բերից, վարպիսին համարվում  
եր նա առաջ, վեր և ածել պատվի գործի,

փառքի գործի, առաջինուրյան յեվ հերասուրյան  
գործի\*):

Աշխատանքի իրավունքը ԽՍՀՄ-ում նշանակում  
է իսկական ազատ մարդու, սոցիալիստական մեծ պե-  
տության քաղաքացու՝ լիարժեք առողջ կյանքի իրա-  
վունք:

Մեր ինդուստրիայի նոր գիգանտները, վորոնք  
կառուցված են գիտության և տեխնիկայի վերջին  
խոռքի համաձայն, լուսավոր, ընդարձակ ու տաք ցե-  
խերով, նորագույն գործիքներով ու սարքավորումով,  
դուշի կառուցվածքներով, հանգստի սենյակներով,  
բուժեաներով ու ճաշարաններով, կանաչապատված  
տարածություններով և այլն, ստեղծում են բոլոր պայ-  
մաններն առողջ, ուրախ աշխատանքի համար:

Յարական Ռուսաստանից մնացած ձեռնարկու-  
թյուններն արմատական տեխնիկական վերակառուց-  
ման հետևանքով միանդամայն փոխվել են:

Ամենից ավելի ծանր աշխատանք պահանջող  
գործերը մեղ մոտ ավելի ու ավելի մեքենայացվում են:  
Վնասակար աշխատանքային պրոցեսների հերմետա-  
ցում և մեկուսացում է կատարվում: Ցեխերը սարքա-  
վորվում են կատարելագործված վեհատիւցիոն կա-  
ռուցվածքներով և այլն:

Աշխատանքի պայմանների արմատական բարե-  
լավումն արդյունաբերական ձեռնարկություններում  
և բժշկական սպասարկման կազմակերպումը ձեռնար-  
կություններում հասցեին արագմատիզմի զգալի կըր-  
ճատման արդյունաբերական բանվորների մեջ: Հի-

\*) Ի. Ստալին—Լենինիզմի հարցերը:

Վանդացման և տրավմատիզմի նվազեցման դուրեկ գործուն հանդիսացավ ստախանովյան շարժումը:

1930-ից մինչև 1935 թվի ժամանակաշրջանում արդյունաբերության բոլոր ճյուղերում տրավմատիզմն իջել և միջին հաշվով 35 տոկոսով:

Ստախանովյան շարժումը տանում է դեպի աշխատանքի կուլտուրայի բարձրացում, դեպի տեխնիկայի ավելի լավ յուրացում, մաքրության և կարգությունի արմատացում՝ ինչպես աշխատանքի պայմանների մեջ արտադրությունում, այնպես ել ընտանեկան կենցաղում:

Այս բոլորը տանում է դեպի հիվանդացման ու տրավմատիզմի նվազում:

Ստորև բերված աղյուսակները ցույց են տալիս, վոր հիվանդացումը և տրավմատիզմը ստախանովյականների մեջ ավելի քիչ և, քան վոչ ստախանովյականների մեջ:

### Աղյուսակ 1

Գեղեցերի լիվ ուերի թիվը 100 ապահովագրվածի նկատմամբ<sup>1)</sup>

Տեխնիկ	Դեպի քեր		Որեր	
	Ստախանովյականներ	Վոչ ստախանովյականներ	Ստախանովյականներ	Վոչ ստախանովյականներ
Մարտենյան	19, 6	88, 1	103, 1	698, 4
Գլոցային	7, 4	81, 8	53, 3	746, 0

\*) 1936 թ. առաջին կիսամյակի տվյալները «Սերպ ի. մոլոտ» գործարանում: Ն. Գորշկով—«Կոլոմայի փորձը» Եջ 90, Կուսաբարտ 1937 թ.

Աղյուսակ 2  
Ժամանակավար անաշխատություն համար վեարված ուերի թիվը 100 ապահովագրվածի նկատմամբ<sup>\*)</sup>

Հիվանդության տեսակները	Վոչ ստախանովյականներ	Ստախանովյականներ
Ընդամենը	502, 7	145, 5
Քրիպ	64, 9	28, 0
Ֆուռունկուլյոզ	47, 1	17, 4
Մալարիա	14, 0	3, 6
Ստամոքս-աղիքային	83, 0	26, 8
Դժրախտ դեպքեր	36, 0	15, 9
Ցենցաղային դեպքեր	23, 7	6, 8
Այլք	188, 2	43, 4

Ստախանովյականները վոչ միայն ուշուց են հիվանդացմանը, այլև ավելի կարճ ժամանակով:

### Աղյուսակ 3

Հիվանդանալու մեկ դեպքի միջին տեղողությունը<sup>\*\*)</sup>

Գործարաններ	Ստախանովյականներ	Վոչ ստախանովյականներ
Ստալինի անվան	7, 2	8, 4
Մոլոտովի անվան	5, 9	8, 8
«Ելեկտրոստատ»	6, 5	9, 0
«Կարգուենտա»	6, 3	7, 4
Զբդ Պողոսիկի	7, 2	8, 4

\*) 1936 թ. յերկրորդ կիսամյակի տվյալները «Կոլոմայի» գործարանում: Ն. Գորշկով—«Կոլոմայի փորձը» Եջ 90, 1937 թ.

\*\*) Ն. Գորշկով—«Կոլոմայի փորձը» Եջ 93, Կուսաբարտ, 1937 թ.

ՀԱՆԳՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՄԵԶ ՄՈՏ  
ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄՈՏ

Մեր յերկիրն աշխարհում միակ յերկիրն է, վորի հիմնական որենքով հոգատարությամբ ու խնամքով պաշտպանվում է աշխատավորների հանգստի իրավունքը: Սահմանադրության 119 հոդվածն ասում է՝  
ԽՍՀՄ-ի բաղադրական օւնեն հանգստի իրավունք:

Հանգստի իրավունքն ապահովվում է բանվարմերի ներք մեծամասնուրյան համար աշխատանքային որը կրնատելով-հասցնելով 7 ժամի, բանվարմերի յեզ ծառայողների համար սահմանելով տարեկան արձակուրդ՝ աշխատվարձի պահպանմամբ, աշխատավորներին սպասարկելու համար սանատօրիների, հանգստյան տների, ակումբների լայն ցանց տրամադրելով»:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով կուրորտաները, սանատորիաները, հանգստյան տները դարձան աշխատավորների սեփականություն: Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն աշխատավորները յերազել անգամ չելին կարող կուրորտաներում, սանատորիաներում ու հանգստյան տներում բուժվելու և հանգստանալու հնարավորության մասին:

Յարական Ռուսաստանում կուրորտաներից ու սանատորիաներից ոգավում ելին միայն հարուստները: «1907 թվին\*») Կովկասյան հանքային ջրերում «հանգըստացողների» կազմն եր՝ 42 տոկոս կալվածատերեր,

\* ) Պ. Մոսկատով. — «Խորհրդային քաղաքացու հանգստի իրավունքը» ՀամԿ(թ)Կ Կենտկոմի Կուսարատ, 1937 թ.

աղնավականներ ու վաճառականներ, 24 տոկոս գործարանատերեր, ֆաբրիկանատներ ու կուլակներ, 23 տոկոս սպաններ ու չինովնիկներ, 10 տոկոս գիտնականներ ու բժիշկներ, 1 տոկոս տերտերներ»:

Հանգստյան տներ են ստեղծված մեր անծայրծիր սոցիալիստական հայրենիքի բոլոր անկյուններում: և ծայրահեղ հյուսիսում, և Միջին Ասիայում, և Հեռավոր Արևելքում: Մեզ մոտ հատուկ հանգստյան տներ են կազմակերպված հղի կանանց համար, ծձկեր յերեխաններով մայրերի համար, յերիտասարդության համար:

ԽՍՀՄ-ի բանվորների և ծառայողների նշանակալի մասը հանգստյան տներ և ուղարկվում պետական սոցիալական ապահովագրության միջոցների հաշվին, պլոտ-բյուջեի և տնտեսական մարմինների միջոցների հաշվին:

Տ 39 Խորհրդային իշխանության տարիների ընթացքում կառուցված են մի շարք նոր, հրաշալի սարքավորված սանատորիաներ Սոչիում, Կիուվուգակում, Եսենտուկիում, Ղրիմում և Խորհրդային Միության մյուս վայրերում:

Սոցիալիստական ապահովագրության բյուջեյով յերկրորդ հնգամյակի չորս տարվա ընթացքում հանգստյան տների, սանատորիաների և կուրորտաների վրա ծախսված է 1317,5 միլիոն ռուբլի:

Հնգամյակի ընթացքում (1933-1937 թ.թ.) պրոֆմիութենական կազմակերպությունների կողմից հանգստյան տներ, սանատորիաներ, կուրորտաներ և հանգստի որվա բաղաներ են ուղարկված 15,5 միլիոն մարդ:



1938 թվին պրոֆմիություններն ունեցին հանգըստ տյան տների, սանատորիաների և կուրորտների 2719 հազար ուղեգիր: 1938 թվին հանգստյան տներ, սանատորիաներ ու կուրորտներ 348 հազար մարդ ավելի յէն գնացել, քան անցյալ տարի: Բացի զբանից, հանգստի որվա բազաների համար տրամադրվել և 1,6 միլիոնից ավելի ուղեգիր:

Նախկին պալատներում, իշխանական վիլաներում, նախկին կալվածատիրական տներում և զատակերտներում հանգստանում և կազդորվում են Խորհրդային Միության բանվարներն ու գյուղացիները:

Պատրաստ են հանգստացողներին ծառայելու շրիմի արևոտ ափերը, Արխազիայի և Աջարստանի արմավենու պուրակները, Սվանեթիայի լեռները, մերուանչելի հայրենիքի ամենագեղեցիկ տեղերում յեղած սանատորիաները, կուրորտներն ու հանգստյան տները: Հանգստի իրավունքն իրականություն և դարձել միշտ այն մեր յերկրում: Այդ իրավունքի հետքն անդամ չկա կապիտալիստական յերկրների աշխատավորների մոտ:

Կապիտալի յերկրներում կուրորտա-սանատորիական բուժումից ոգտվում են բացառապես կապիտալիստները և նրանց հավատարիմ ծառաները: Այն մասին, թե ով եր դնում արտահաճանյան կուրորտները, կարելի յէ դատել, որինակ, ըստ Գերմանիայում հայտնի Բաղեն-Բաղեն կուրորտի: Յերեք տարբա ընթացքում (1911-1913) այդ կուրորտն այցելողների մեջ կային 15 տոկոս իշխաններ, կոմսեր, ազնվականներ ու բարձր աստիճանավորներ, 6 տո-

կոս կալվածատիրեր, 53 տոկոս բանկիրներ, ֆաբրիկատերեր, վաճառականներ, անատերեր և ունտայով ապրողներ, 1,5 տոկոս բարձրաստիճան հոգեկողականներ ու տերտերներ, 8 տոկոս անորոշ զբաղմունքի տեր մարդիկ և 3,5 տոկոս չինովնիկներ: Յերեք տարբա ընթացքում այդ կուրորտառում չի յեղել վոչ մի բանվոր և վոչ մի գյուղացի:

Միայն պրոլետարիատի գիլտատուրայի մեր յերկրում, վորին զեկավարում և կենիսի—Ստալինի կուսակցությունը, բանվորներն ու ծառայողները կարող են պետության հաշվին հանգստանալ և վերականգնել իրենց առողջությունը սանատորիաներում, կուրորտներում ու հանգստյան տներում: ԽՍՀՄ յեղող ոտարերկրյա բանվորական պատվիրակությունները, լինելով հանգստյան տներում ու սանատորիաներում, ոքանչանում են մեր մեծ հայրենիքի բանվոր դասակարգի այդ նվաճումներով:

ԾԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՐՓՈՒՄ ԱՐԱՎՈՎՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ  
ՑԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Սահմանադրության 120-րդ հոդվածը, վորը խոսում և նյութական ապահովության իրավունքի մասին ծերության, ինչպես նաև հիվանդության և աշխատունակությունը կորցնելու դեպքում—իր քաղաքացիների առողջության նկատմամբ սոցիալիստական պետության ունեցած հոգատարությունն արտացոլող ամենափայլուն մոմենտներից մեկն է:

Այդ իրավունքն ապահովվում և պետության հաշվին բանվորների և ծառայողների սոցիալական ապահովագրության լայն ծավալմամբ, ձրի բժշկական ոգությամբ, աշխատավորներին ոգտագործման համար կուլտուրների լայն ցանց տրամադրելով։ Խորհրդագոյն Միությունն ամբողջ աշխարհում միակ յերկրն եւ, վորտեղ աշխատավորներն ապահովվում են բոլոր տեսակի ձրի և վորակյալ բժշկական ոգնությամբ։

Մեր պետությունը հսկայական միջոցներ և ծախում առողջապահության վրա։ Պետական և տեղական բյուջեներով առողջապահության վրա արված ծախսերը 1937 թվին կազմում ելին 6827 միլիոն ռուբլի։ 1938 թվին առողջապահության վրա ծախսված է 8076 միլիոն ռուբլի, այսինքն՝ 1249 միլիոն ռուբլով կամ 18,3 տոկոսով ավելի, քան անցյալ տարի։

Մայրության ու մանկության պահպանության ձեռնարկումների վրա 1938 թվին ծախսվել է 1382 միլիոն ռուբլի։

Մարդկանց նկատմամբ այսպիսի հոգատարություն հնարավոր և միայն հաղթանակած սոցիալիզմի յերկրում։

Բավական և առել, որինակի համար, վոր խորհրդագային իշխանության տարիների ընթացքում բուժարանների և պոլիկլինիկաների թիվը քաղաքներում ավելացել է 10 անգամ, գյուղերում՝ 4 անգամ (առյուտակ 4)։

Մեր նվաճումներն առանձնապես ակնբախ են հիմնարկների, պոլիկլինիկաների և մյուս բուժական հիմնարկների ցանցի ծավալման բնագավառում։

ազգային հանրապետություններում։ Հազարական ԽՍՀ-ն, որինակ 1938 թվի սկզբին ուներ 19 հազարից ավելի հիվանդանոցային մահմակալներ։ Յարական Ռուսաստանում այժմյան Հազարամասի տերիտորիայի վրա բոլոր հիվանդանոցներում յեղել է 1800 մահմակալ։ Ռուգրեկստանի տերիտորիայի վրա 1913 թվին հաշվում եր ընդամենը 800 հիվանդանոցային մահմակալ։ 1938 թվի սկզբին խորհրդագային Ռուգրեկստանն ուներ հրաշալի սարքավորված բուժական հիմնարկներ 13,500 մահմակալով։ Ռուգրեկստանում 1913 թվին յեղել է 32 բուժարան, այժմ նրանց թիվը հասնում է 386-ի։ Կիրգիզիայում ցարիզմի ժամանակ յեղել է ընդամենը 100 հիվանդանոցային մահմակալ, իսկ այժմ կիրգիզական ԽՍՀ-ում կա 2260 մահմակալ։ Տաջիկստանում մինչև հեղափոխությունը յեղել է մեկ հիվանդանոց և 8 հազար գրքաց։ Իսկ հիմա՝ 96 հիվանդանոց, 211 բժշկական և բուժարանական տեղամասեր և 137 մանկաբարձական-բուժակային կայաններ։

Միության ամենահեռավոր անկյուններում լայնորեն կիրառվում են սենտագենը, ֆիզիոթերապիան, արյան փոխներարկումը և այլն։

#### Աղյուսակ 4

Հանրապետություններ	1 հունվարի 1914 թ. (% -ով)	1 հունվարի 1938 թ. (% -ով)
Բելոռուսական ԽՍՀ	100	360
Վրացական ԽՍՀ	100	400
Ռուգրեկական ԽՍՀ	100	1630
Հազարական ԽՍՀ	100	960
Կիրգիզական ԽՍՀ	100	2430

Խորհրդային առողջապահության հսկայական նվաճումն և հանդիսանում հիվանդների տնային բուժութասրկման կազմակերպումը:

Խորհրդային իշխանության 20 տարիների ընթացքում ստեղծված և հատուկ բուժիմնարկների ճյուղավորված ցանց, վորպիսիք բոլորովին չեն յեղել մինչհեղափոխական Ռուսաստանում: Այդպիսի հիմնարկների թվին են պատկանում տուբերկուլյոգիային, վեներոլոգիական և պոխոնենցրոլոգիական դիսպաններները և այլն:

Մեծ ուշադրություն է դարձված բանվորների բուժութասրկմանն անմիջականորեն արտադրության մեջ:

Ստեղծված և բուժական հիմնարկների նոր տիպ ձեռնարկություններում՝ առաջին բուժովնության կայաներ, բժշկական առկայաններ, բուժարաններ ու պոլիկլինիկաներ:

Ցարական Ռուսաստանի ձեռնարկություններում կային հատու կենտ բուժակային և բժշկական կայաններ, այժմ ԽՍՀՄ-ում կան 7 հազարից ավելի առկայաններ:

Բժիշկ կոչումը մեր յերկրում հարգանքով և շրջապատված: Տասնյակ հազարավոր բժշկական աշխատավորներ՝ բժիշկներ, բուժակներ, բժշկական քույրեր յեռադպին ու անձնվեր կերպով աշխատում են, պահպանելով բնակչության առողջությունը: Կոմունիստական կուսակցությունը, Խորհրդային կառավարությունը և անձամբ ընկեր Ստալինը հսկայական ուշադրություն են դարձնում նոր բժշկական կադրերի աճման վրա:

270,000 միջին բուժաշխատողներ ներկայում և սովորում են ԽՍՀՄ-ի բժշկական դպրոցներում:

1913 թվին կար ընդամենը 13 բարձրագույն բժշկական ուսումնական հաստատություն: Այժմ՝ 70 բժշկական ԲՈՒՀ-եր և բժիշկների կատարելազորման 10 ինստիտուտ:

Մեր բժշկական կադրերի թիվը վերջին տարիների ընթացքում ավելացել և ավելի քան 5 անգամ: ԽՍՀՄ-ում այժմ աշխատում են 105 հազար բժշկներ: 1937 թվին բժշկական ԲՈՒՀ-եր են ընդունվել 24,5 հազար մարդ: Միայն ուսանողների 1937 թվի հավաքագրումը գերազանցում է ցարական Ռուսաստանում աշխատող բոլոր բժիշկների թվից: Մեր բժշկական ԲՈՒՀ-երում այժմ սովորում են 91,700 ուսանողներ:

Կուսակցությունը և կառավարությունը մեծապույն ուշադրություն են դարձնում բուժաշխատողների պատրաստման գործի բարելավման վրա, նրանց նյութական-կենցաղային գրության բարելավման վրա:

Համեր (թ)կ կենտկոմի և ԽՍՀՄ ժողկոմիորհի 1935 թվի մարտի 4-ի վորոշման հետևանքով՝ խիստ փոխվել և բժիշկների աշխատավարձը: Բժշկի միջին աշխատավարձը բարձրացել է 53,5 տոկոսով:

Գյուղական բժշկական տեղամասն ամրապնդելու մասին ԽՍՀՄ ժողկոմիորհի վորոշումն\*) ստեղծում և բոլոր պայմանները՝ բուժական գործը գյուղում լավագույն կերպով կազմակերպելու համար:

Մինչեւ հեղափոխությունը գյուղական բժշկական և բուժակային տեղամասները չափազանց քիչ եյին: Հաղվագյուտ բացառությամբ՝ նրանք քարշ եյին տակա իրենց վողորմելի գոյությունը:

1910—1912 թվերին այն նահանգներում, վորտեղ

\*) «Պարզա», 24 ապրիլի 1938 թ.

զիմստվոներ եյին կազմակերպված, գյուղություն ուշնեյին 2686 բժշկական տեղամասներ, վորոնցից տեղամասային հիվանդանոցներ՝ 1710; Միջին հաշվով մեկ բժշկական տեղամասին ընկնում եր 28-30 հազար մարդ: Յուրաքանչյուր 10 հազար գյուղական բնակչի ընկնում եր 4 հիվանդանոցային մահճակալ: Խսքնուրույն բուժակային կայաններ գյուղում կային 2620:

Առ 1-ն հունվարի 1937 թ. գյուղական վայրերում կային 11488 բժշկական-տեղամասային բուժարաններ և 5540 տեղամասային բժշկական հիվանդանոցներ, 14484 բուժակային և բուժակա-մանկաբարձական կայաններ ու 7042 մանկաբարձական կայաններ:

Մոտ 12000 բժիշկներ այժմ աշխատում են գյուղական բժշկական բուժարաններում և հիվանդանոցային տեղամասներում: 78 հազարից ավելի բուժակներ, մանկաբարձուժներ և բժշկական քույրեր են աշխատում գյուղում: Գյուղում աշխատող բժիշկների մեջ 1576-ը վիրաբուժներ են, 1061-ը՝ մանկաբարձուժներ, 654-ը՝ մանկաբուժներ և 259-ը՝ մալարիոլոգներ, 411-ը՝ սանիտարական բժիշկներ, 234-ը՝ վեներոլոգներ, 185-ը՝ ակնաբուժներ և 1904-ը՝ ատամնաբուժներ: Բացի դրանից, գյուղում աշխատում են ունտղենողներ, եպիդեմիոլոգներ, ոտոլարինոգոփներ:

Կուանտեսային գյուղացիությունն ոգտվում է դիագնոստիկայի և բուժման այսպիսի նորագույն միջոցներից, ինչպիսիք են՝ ունտղենը, ֆիզիոթերապիան: 1937 թվի սկզբին գյուղական տեղամասային հի-

վանդանոցներին կից աշխատում եյին 198 ունտղենայան կարինետներ, 142 ֆիզիոթերապիական կարինետներ և 199 կլինիկական լաբորատորիաներ:

Ընդարձակում և բժշկական հիմնարկների ցանցը գյուղում: 1938 թվին կար 11.785 բժշկական տեղամաս, նրանցից 850-ում սարքավորված են լաբորատորիաներ մանրադիտակներով: Գյուղություն ունեցող ցանցից բացի, լրացուցիչ կերպով բացվում են 11 հազար բուժակային և մանկաբարձական կայաններ: Կառավարությունը 20,5 միլիոն սուրբի յեհատկացրել գյուղական տեղամասային բժշկների աշխատավարձը բարձրացնելու համար: Նա պարտավորեցրել ե՝ տեղամասային բժշկներին ապահովել ձրի բնակարաններով, վառելիքով, լուսավորությամբ: Նա ստեղծել և բոլոր պայմանները սիստեմատիկորեն բարձրացնելու բժշկի վորակը: Այս բոլորը՝ մարդկանց նկատմամբ Ստալինյան նոգատարության արտահայտությունն ե:

Այն ժամանակ, յերբ կապիտալիստական յերկը ներում անշեղորեն բարձրանում և բնակչության հիվանդացումը, մեզ մոտ նա խիստ նվազում ե: Ցարական Ռուսաստանում խոլերան, ժանուարիաը, ծաղիկը, տիֆերն ամեն տարի գերեզման եյին տանում տառնյակ հազարավոր մարդկանց: ԽՍՀՄ-ում լիովին վերացված են ծաղիկը, խոլերան և մյուս հիվանդությունները, վորոնք մինչև հեղափոխությունը մեծ թվով մահացության պատճառ եյին հանդիսանում:

Ցարական Ռուսաստանում ամեն տարի 100 հազարից ավելի մարդ եր հիվանդանում ծաղկով: ԽՍՀՄ-ում աճա արդեն մի քանի տարի յե, ինչ դադարել

Ճաղիկ հիվանդությունը (ծաղկով հիվանդացողների թիվն ամբողջ Միության մեջ միավորներով և հաշվվում):

Մեծ հաջողությունների յե հասել մեր յերկիրը տրախոմայի և վեներական հիվանդությունների գեմ մղվող պայքարում: Միփիլիսով հիվանդանալու նոր դեպքերն, որինակ, քաղաքներում, խորհրդային իշխանության գործության շրջանում, կրծատվել են 13 անգամ: Տրախոմա հիվանդությունն այսպիսի հանրապետություններում, ինչպես Թաթարականը, Չուվաշականը, վորոտեղ նաև ամենից ավելի բարձր եր, խիստ կրծատվել է. Թաթարականում՝ 89 տոկոսով, Չուվաշականում՝ 75 տոկոսով:

1937 թվին մահացությունը մեր յերկրում 40 տոկոսով ավելի ցածր եր, քան 1913 թվին: Ստալինյան մեծ հոգատարությունը մարդկանց նկատմամբ իր վառ արտահայտությունը գտավ պետական սոցիալական ապահովագրության մեջ, վորոտ հանդիսանում է ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի կարեռագույն հեղափոխական նվաճումներից մեջը:

«Առաջին հնգամյակի չորս տարիների ընթացքում սոցիալական ապահովագրության ծախսի բյուջեն փոքր ինչ գերազանցում եր 10 միլիարդ ռուբլուց, յերկրորդ հնգամյակի չորս տարիների ընթացքում նաև հասավ 26,5 միլիարդ ռուբլու: 1937 թվին սոցիալական ապահովագրության յեկամուտներն անցնում եյին 5,5 միլիարդ ռուբլուց: 1938 թվին նրանք հասանեն մինչև 6,3 միլիարդ ռուբլու\*):

\* ) «Պրալգա», 14 մայիսի 1938 թ. Առաջնորդող «Խորհրդային յերկրի սոցիալական ապահովագրության բյուջեն»:

Վոչ մի տեղ, վոչ մի կապիտալիստական յերկրում չկա և չի կարող լինել սոցիալական ապահովագրության այնպիսի սիստեմ, ինչպես ԽՍՀՄ-ում: Կապիտալիստական յերկրներում շարունակ կրծատում են սոցապի առանց այն ել չնչին հատկացումները: Կրծագում են նպաստների ու կենուաթոշակների չափերը և ստանալու ժամկետները, նպաստից դրկում են բանվորների ամբողջ կատեգորիաներ:

Գերմանական և խոտական ֆաշիզմը վերացնում և սոցիալական ապահովագրության վերաբերյալ նույնիսկ այն պոչատ որենողությունը, վորը նվաճել եր պրոլետարիատն անցյալում: Սահմանից այն կողմը յերբ բանվորը ծերանում և կամ հիվանդանում, նրան փողոց են շվերտում: Բոլորովին ուրիշ գրություն և մեր յերկրում:

Բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության մեջ չկան ավելորդ մարդիկ, վորոնց հարկավոր չլինի բուժել, կարելի լինի թողնել բախտի քամանաձույքին, ուն դարձնել հիվանդությունների ու մահվան:

Մարդը թանգ և խորհուրդների յերկրի համար: ԽՍՀՄ-ն գրանով և աաբերգվում կապիտալիստական յերկրներից, վորտեղ վոչնչանում են «ավելորդ մարդիկ»: Մարդիկ հարկավոր չեն կապիտալիզմին, միլիոնավոր լավագույն մարդիկ բեռ են դարձել:

Ահա թե ինչ և գրում Մ. Ի. Կալինինը խորհրդային սոցիալական ապահովագրության նշանակության մասին\*):

\* ) Մ. Ի. Կալինին.—«Բանվոր զառակարգն առաջնորդում և հիմա»: «Պրալգա», 9 հոկտեմբերի 1937 թ.:

«Բանվարմերի ապահովագրությանը նիվանդուրյան, աշխատանակուրյանը կորցնելու, ինչպես նայել ծերուրյան դեպիում՝ ոսցիալիստական հեղափոխուրյան վոչ-փոք նվաճումն է։ Ի՞նչ ե նեանակում ձեր բժշկական ոգնուրյան, Յեռ վորակյալ բանվոր եյի, իմ աշխատավարձը գերազանցում եր բանվարմերի միջին աշխատավարձից։ Մեկ անգամ յես հիվանդացա գործարանում, հիվանդ պառկեցի յերկու ամիս յեկ այդ ժամանակի համար ապահովագրական դրամարկղից ստացա ընդամենը 15 ռուբլի։ Իսկ չե՞ վօր իմ աշխատավարձից դուրս եյին գալիս ապահովագրական մեկուկես տակոսը։ Դրան ավելացրեմ բժշկք վարձատրուրյունը, դեղերի արժեքը—յեկ ձեզ համար պարզ կիխնի, քե ինչ դրուրյան մեջ ընկավ վորակյալ բանվորը։ Հիվանդուրյան յերկու ամիսները, ինչպես տուած տառում եյին, ինձ մաքուր բափավին։»

## ԾԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԶ ՄՈՏ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄՈՏ

Կապիտալիստական աշխարհում խորը և անհանեկի յե ծերության տրագեդիան բանվորի, գյուղացու, ինտելիգենտի համար։ «Ծերությունը — ուրախություն չե», «Քառասուն լրացավ, բանս պլծավ»։ Ժողովրդական իմաստությունն այսպիսի առածներով և ամփոփում կապիտալիզմի ժամանակ ծերության նը-կատմամբ յեղած վերաբերմունքի դայլի որենքը։ Մուրացկանություն, յեկեղեցու դուռ—ահա այս եր վիճակված հարյուր հազարավոր ծերերին, ժողո-

վերդից յելած աշխատավորներին, վորոնք իրենց ուժն ու առողջությունը կորցնում եյին կապիտալիստական արտադրության մեջ։

ԽՍՀՄ-ում վոչ մեկին չի տանջում վերահսկերության միտքը։ Այստեղ յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր ծառայող գիտե, վոր սոցիալական ապահովագրության սխատեմն ապահովում ե նրան և ծերության, և հիվանդության կամ աշխատունակությունը կորցնելու դեպքում։

Ծերացած կամ աշխատունակությունը կորցրած մարդը մեր յերկրում ստիպված չի լինելու, կապիտալի յերկրների աշխատավորների նման, մուրացկանություն անել, վողումություն խնդրել ձեռք մեկնել մի կտոր հացի համար։ Սոցիալիզմի յերկրում խորհրդացին քաղաքացիների համար ապահովված ե հանգիստ և ուրախ ծերություն։

ԽՍՀՄ-ում սոցիալիստական պետությունն ամենատարի միլիարդներ և ծախսում ծերունիների, հաշմանդադիմների և ժամանակավորապես աշխատունակությունը կորցրած մարդկանց նյութական ապահովության համար։

Խորհրդացին յերկրի ծեր մարդու իսկական զգացմունքները փայլուն կերպով արտացոլեց Դադըստանի ժողովրդական յերդիչ 70 տարեկան Սուլեյման Յասարկին։

Ըսկեր կալիսինի ձեռքից ընդունելով լինինի շքանշանը՝ նա գտավ զարմանալիորեն ճիշտ հուշող բաներ, վորոնք արտահայտում են խորհրդացին քաղաքացու ամենախորը լավատեսությունը։

«Իմ յերկրում, վարտեղ չկա ծերություն,  
Ուր հավերժական սառցադաշտերն են հալչում,  
Միլիոնները յեվ վաշ մենակ յես  
Իրենց յերիտարդությունն են գտնում»:

Շատ լավ եր գրում ընկ. Կալինինը՝ «Վար-  
ժե՞ն ե, վոր աշխատավոր մարդն իր հասարակ  
ֆիզիկական աշխատանքի համար, և վաշ թէ վաս-  
տիկանության մեջ կամ հեղափսխական շարժման  
դեմ պայմանական ստեղծված ամեն տե-  
սակի ուրիշ հիմնարկներում ծառայելու համար  
(այդպիսի մարդկանց բուրժուազիան համարյա-  
քոլոր յերկրներում տպահովամ ե) իրավունք ունի պի-  
տական տպահովության ծերության կամ հեղափսխա-  
րյան և աշխատանակաւթյունը կորցնելու դեպքում:  
Վաշ մի տեղ աշխարհում աշխատավորներն այդպիսի  
իրավունքներ չունեն և, բանի դեռ իշխանության  
գլուխ բուրժուազիան և կանգնած, չեն ունենա»:

## ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԶՈՂ ՍԵՐԻՆԴԻ ՄԱՍԻՆ

Սահմանադրության 121-րդ հոդվածն ապահո-  
վում է ԽՍՀՄ բաղաքացու կրթության իրավունքը, Մեր  
յերկրում դպրոցն իսկապես հանրամատչելի յէ, կը բ-  
թությունն իսկապես ընդհանուր ե: Մեզ մոտ կը թու-  
թյունն ու գաստիարակությունը սերտորեն կապված  
են յերեխաների առողջության ամրապնդման հետ:  
Կառուցված են և շարունակում են կառուցվել նոր,  
հրաշալի դպրոցներ: Ել ավելի մեծ թվով բժիշկներ  
են սպասարկում մանկական հիմնարկները: Միլիոնա-

վոր յերեխաներ անցնում են ամառային ճամբարնե-  
րի, մանկական գաղութների, հրապարակների և ա-  
ռողջապահական մյուս հաստատությունների միջով:  
Լենինի—Ստալինի կուսակցության, վողջ խոր-  
հըրդային ժողովրդի կողմից սիրով աճեցվող մեր մատաղ  
սերունդն ոգտվում է Հոկտեմբերյան սոցիալիստա-  
կան մեծ հեղափոխության բոլոր նվաճումներից:

Մեզ մոտ ամբողջ լավագույնը յերեխաներին ե  
պատկանում—հրաշալի պալատներ, նոր, լուսավոր  
գպրոցներ, մանկապարտեղներ, մօուրներ, ստագիոն-  
ներ, թատրոններ, ակումբներ, սանատորիաներ, պիո-  
ներական ճամբարներ:

Տարեցտարի մեր կառավարությունն ավելաց-  
նում է յերեխաների սպասարկման ծախսերը:

Այս տարի ԽՍՀՄ ժողկոմիսորելը պետական սո-  
ցիալական ապահովագրության միջոցներից 654,4  
միլիոն ոռութիւն յէ հատկացրել յերեխաների սպասարկ-  
ման համար: Այդ՝ կուսակցության ու կառավարու-  
թյան անդադրում հոգատարության փայլուն որի-  
նակն ե մեր աճող սերնդի մասին: Հենց միայն պիո-  
ներական ճամբարների պահպանման և սարքավոր-  
ման համար պետական սոցիալական ապահովագրու-  
թյան և պրոֆմիութենական բյուջեյով բաց և թող-  
նըված մոտ 200 միլիոն ոռութիւն:

Այս տարի պիոներական ճամբարներն սպասար-  
կել են մոտավորապես 2 միլիոն յերեխայի:

«Մենք աճեցնում ենք մեր յերեխաներին: Մենք  
ուղղում ենք նրանցից մեծացնել փոխարինողներ, վո-  
րոնք կարողանան ավարտել կենինի սկսած մեր կու-  
սակցության վարած գործը, վորն այնպես կազմակերպ-

Հորեն ու լավ մտածված կերպով ղեկավարում են քնիկեր Ստալինը: Մեծ զործ է, կարեռ զործ: մենք մեր յերեխաներից պետք է մեծացնենք ամրակազմ փոխարինողներ, Փիդիկապես ուժեղ փոխարինողներ, վորակեղի հեմոգլոբինն այնքան լինի, վորքան հարկավոր ե թոքերն առողջ լինելու համար, մեծացնենք այնպիսի յերեխաներ, վորոնք կարողանան և՛ բերկուանքով ապրել, ներծծել կյանքի ամբողջ՝ ուրախությունը, և՛ վորոնք միաժամանակ լինեն գիտակ, լրջախոհ, գիտությունն առաջ շարժող, նրան նոր հասարակաբարդի կառուցմանն ի սպաս դնել կարողացող մարդիկ, կոլեկտիվ կերպով ապրել, աշխատել, կյանքը վայելել կարողացող մարդիկ»):

«Հենց նրան, այդ յերիտասարդության և վեճակած վերջացնել, ավարտել կոմունիզմի գործը, և հենց նրան են սպասում կոմունիզմի համար մզգող մարտերը, և նա այդ մարտերին պետք և դիմավորի ամրակազմ, առողջ—պողպատե նյարդերով ու յերկաթե մկաններով»: (Լենին):

Վոչ մի յերկիր աշխարհում այնչափ ուշադրություն չի դարձնում մարդկանց ֆիդիկական դաստիարակության վրա, ինչպես մեր սոցիալիստական հայրենիքը: Վոչ վոք ֆիդիկական կուլտուրայի զարգացման համար այնպիսի հնարավորություններ չունի, ինչպիսիք կան մեր յերկրում: Սպորտը մեզ մոտ հան-

\*) Ն. Կ. Կրուպսկայա—Ծանր արդյունաբերության անտեսավարների և ինժեներ-տեխնիկական աշխատողների կանաց համամիութենական խորհրդակցությանն արտասանած ժամանակակից պահանջության մասից: «Պրակտա», 1936 թ. մայիսի 14-ի №-ը.

դիսանում ե բոլոր քաղաքացիների սեփականությունը: Մեր կուսակցությունը, մեր կառավարությունն ապահովում են ֆիդիկական կուլտուրայի բարգավաճումը, բոլորին սպորտով պարապելու հնարավորություն տալիս:

ԽՍՀՄ-ում սպորտային շարժման աճման մասին պատկերացում ունենալու համար բավական է հիշել, վոր մինչև հեղափոխությունը Ռուսաստանում կային միայն 20 սպորտային ակումբներ, մինչդեռ այժմ մենք ունենք սպորտով պարապող 30 հազարից ավելի կոլեկտիվներ, իմբակներ, խմբեր ու ակումբներ:

Ֆիդիկուլտուրայի զանազան մասսայական ձևեր կազմություններից 4 միլիոնից ավելի ֆիդիկուլտուրնիկ-ներ տվել են «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» կոմալեքսի նորմաները: Ֆիդիկուլտուրան ԽՍՀՄ-ում իրագործվում ե վորպես հոկայական պետական կարևորություն ունեցող գործ: 1938 թվին ֆիդիկական կուլտուրայի զարգացման համար ծախսված է 600 միլիոն սուբլի: Այդ յերեք և կես անգամ ավելի յեն նրանից, վոր ցարական կառավարությունը 1913 թվին բաց եր թողնում ժողովրդական լուսավորության համար:

Վիթսարի միջոցներ են ծախսվում սպորտային կառուցվածքների շինարարության համար: Այժմ խորհրդային Միության մեջ կան 650 մեծ ու փոքր ստագիոններ, մոտ 7 միլիոն մասր սպորտային հրապարակներ, 350-ից ավելի ջրային կայաններ, 2500-ից

ավելի գահուկային կայաններ, 100 ֆիզկուլտ տներ  
այլն:

Սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում ժողովը վերդական մասսաների բարեկցության աճի հետ միասին բերեց աշխատավոր բնակչության ֆիզիկական դրության նշանակալի բարելավում: Մեր յերիտասարդությունն ամրակազմ ու առողջ և աճում:

Հետաքրքրական են նշել, վոր 1925 թվին Մոռկշայի 14 տարեկան դպրոցականի միջին հասակը հավասար եր 145,4 սանտիմետրի, իսկ 10 տարի անց՝ 153,8 սանտիմետրի: Նրա միջին քաշը 1925 թվին հավասար եր 37,7 կիլոգրամի, իսկ 1935 թվին՝ 43,3 կիլոգրամի: Կրծքի շրջագիծն ավելացել է 3 սանտիմետրից ավելի:

Ել ավելի նշանակալից և զորակոչային տարիքի բանվոր յերիտասարդության ֆիզիկական զարգացումը: 1923 թվին զորակոչիկի միջին հասակը հավասար եր 159,7 սանտիմետրի, քաշը՝ 51,9 կիլոգրամի, իսկ կրծքի շրջագիծը՝ 79,9 սանտիմետրի: 1934 թվականին այդ թվերը համապատասխանորեն աճեցին՝ 162,4 սանտիմետր, 54,2 կիլոգրամ, 81,9 սանտիմետր:

Խիստ արտահայտված ֆիզիկական թերաման դեպքերի թիվը զորակոչիկների մեջ 1935 թվին մինչհեղափոխական ժամանակի համեմատությամբ, կը ճատկել ե ավելի քան 90 տոկոսով:

Յեկ այդայն ժամանակ, յերբ արտասահմանում գաղափարական յերկրներում յերիտասարդության ֆիզիկական զարգացման վատթարացման պրոցեսն է գնում:

Աղյուսակ 5  
Խոյիսավելերի ընդունող հանձնութողավելերի սլյաները  
(զորակոչային հասակի 100 մարգու համար):

	1935 թ.	1936 թ.	առկուսներով 1935 թ.	նկատմամբ
Հնդկանուր ֆիզիկական թուլություն. . . .	7, 32	13, 61		186
Վաստամաներ . . . .	15, 19	21, 82		137
Ֆիզիկական արաներ	17, 19	28, 94		165
Սրտի և սրտանոթների հիվանդություններ	7, 77	8, 95		115
Հարթ և ծոված վոտնա- թաթ . . . .	24, 8	37, 83		157
Մարսողական որդանների խրնիկական հիվանդու- թյուններ. . . .	4, 77	7, 39		165

### ՄԱՅՐ-ԿՆՈՉ ՅԵՎ ՄԱՆԿԱՆ ՊԱՇԹԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կնոջը աղամարդուն հավասար իրավունքներ տալը, վոր զրի յե առնված Ստալինյան Սահմանադրության մեջ, բացառիկ նշանակություն ունի կնոջ առողջությունը պահպանելու և ամրապնդելու և առողջ սերունդ դաստիարակելու համար: Աշխարհի գոչ մի յերկրում կինը, վորպիս մայր և քաղաքացի, չի ոգտվում այնպիսի հարգանքով ու որենքի պաշտպանությամբ, ինչպես ԽՍՀՄ-ում:

Միայն մեզ մոտ են վոչնչացված այն պատճառներ, վորոնք խանգարում են կնոջը մայրությունը գու-

գակցել արտադրական և հասարակական աշխատանքին - ակտիվորեն մասնակցելու հետ: Ցարական Ռուսաստանում աշխատավոր մայր-կանայք այդ մասին յերազել անգամ չեյին կարող: Այդ մասին յերազել չի կարող նաև աշխատավոր մայր-կինը կապիտալիստական յերկրում, վորտեղ իշխանությունը գտնվում ե բուրժուազիայի ձեռքին, վորտեղ թագավորում ե ֆաշիստական սանձարձակությունը, վորտեղ բանվորութին և նրա յերեխաները մատնված են աղքատության, կիսաքաղց գոյության ու մահվան:

Կապիտալիստական աշխարհում միլիոնավոր աշխատավոր կանայք չգիտեն մայրության ուրախությունը: Այնուեղ բանվորական և գյուղացիական ընտանիքում սոսկումով են դիմավորում ավելորդ բերանի յերեան գալը, վորովհետեւ յերեխաները, ինչպես և ծնողները, վողջ հասարակական-քաղաքական իրավակարգի կողմից մատնված են ծանր զրկանքների ու աղքատության, անհույս կյանքի:

«Դժբախտություն ե յերեխաներ ունենալը», — վորքան հաճախ կարելի յեւ լսել այս նախագասությունը կապիտալի յերկրներում:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը միանգամայն նոր ձևով գրեց ու լուծեց մայրության ու մանկության պահպանության հարցը: Խորհրդային Միության մեջ մայրն ու մանուկը շըրջապատված են կուսակցության ու կառավարության սիրով, հոգատարությամբ և ուշադրությամբ: Մի շաբք հատուկ որենքներով ու վորոշումներով պաշտպանվում են մոր աշխատանքը, մոր ու մանկան իրավունքներն ու առողջությունը:

Թե ինչքան խղճուկ եր մայրության ու մանկության պահպանության հիմնարկների ցանցը ցարական Ռուսաստանում, յերեսում և հետեւյալ ավյալներից: Նույնիսկ գավառական քաղաքներում ծննդարերության ժամանակակից բժշկական ոգնությամբ ապահոված եր կանանց 1 տոկոսից պակասը: Գեղջկուհիները ծնում եյին տանը, առանց վորմե բժշկական ոգնության: Ոգնությունը ցույց եյին տալիս տըգես տասմերները: Ավելի վատ եր փոքր ազգություններին պատկանող կնոջ դրությունը:

Ներկայումս ԽՍՀՄ-ում քաղաքների վողջ կանացի բնակչությունը ծննդաբերության ժամանակապահոված և բժշկական ոգնությամբ: Ծնորհիվ կոլտնտեսային ծննդասների և մանկաբարձական կայանների լայն ծավալման՝ կին-կոլտնտեսութիները նույնպես հնարավորություն ստացան ծնել լավ պայմաններում, բժշկական անձնակազմի հսկողությամբ:

Ցարական Ռուսաստանում 1913 թվին հաշվվում եր բնակչությունը 6824 ծննդաբերական մահճակալ:

1935 թվին ծննդաբերական մահճակալների թիվը աճեց մինչև 46,000-ի, 1936 թվին՝ մինչև 63,500-ի (նրանցից գյուղում՝ 22,500), իսկ անցյալ տարի, ԽՍՀՄ կենսագործկոմի և ժողկոմիսորհի վորոշման\*) իրացման հետևանքով արդեն կար 96,980 մահճակալ (նրանցից գյուղում՝ 30,000):

Բացի այդ, լայն գարգացում ստացան կոլտնտես-

\*) Արորաներն արգելելու, ծննդկանների նյութական ոգնությունն ավելացնելու, բազմազավակ ընտանիքներին պետական ոգնությունն սահմանելու, ծննդասների, մանկամսուրների և կանակապարտեզների ցանցն բնդաբարձելու և այլնի մասին:

սային ծննդատները: Արդեն 1936 թվին նրանցում հաշվում եր մոտ 16,000 մահճակալ: Անցյալ տարվա վերջին կոլտնտեսային ծննդատներում կար 23,000 մահճակալ: Ծննդաբերական մահճակալների ընդհանուր թիվն ամբողջ Միության մեջ 1937 թվի վերջին հասավ համարյա 120 հազարի\*):

Ապահովելով կնոջը ծննդաբերական ողնությամբ՝ խորհրդային առողջապահությունը ձգտում է հեշտացնել նրա ծննդաբերությունը, լայնորեն կիրառելով ծննդաբերության ցավազրկումը՝ ծննդատներում: Ծննդաբերության ցավազրկումը կիրառվում է նուև կապիտալիստական յերկրներում, բայց այնտեղ ցավազրկումը գոյություն ունի միայն հարուստների համար, աշխատավոր կանանց նա անմատչելի յե:

Խոհրդային Միության մեջ բոլորովին նոր ստեղծված և մոռւրների, կանանց ու մանկական կոնսուլտացիաների, կաթնախճանոցների լայնագույն ցանց:

Մինչեղափոխական Ռուսաստանում մոռւրները հաշվում եյին միավորներով, բացվում եյին բժիշկների մասնավոր նախաձեռնությամբ, բարեգործական միջոցներով:

Ներկայումս ԽՍՀՄ-ում չկա վոչ մի հանրապետություն, փորտեղ ստեղծված չլինի մոռւրային լայն ծավալուն ցանց:

Մանկամոռւրների լայն ցանցը փոքեր տարածվել է մեր քաղաքներում և բանվորական ավաններում, գյուղական շրջանային կենտրոններում, խորհ-

\*) Պրոֆ. Ն. Պրովակեր. Գրաշնկով, «Ստալինյան հոգատարությունը մոր և մանկան մասին», «Իդլիստիա», 28/VII 1938 թիվ:

անտեսություններում ու կոլտնտեսություններում: Անցյալ տարվա վերջում մշտական մոռւրներում տեղերի թիվը հասավ 770,100-ի, իսկ ամառվա բերքահավաքի ժամանակ խորհանտեսություններում և կոլտնտեսություններում ծավալված սեղոնային մոռւրներում՝ 4,000,000-ի:

Կառավարությունը, հրապարակելով վորոշումը, լրացուցիչ կերպով հատկացրել է 692,8 միլիոն ոռութիւն՝ 1936 թվին մայրության ու մանկության պահպանության հիմնարկների շինարարության ու ծավալման համար: Այդ հատկացումները տարեցարի մեծանում են:

Վորոշումը պարտավորեցրել է գոյություն ունեցող մոռւրային մահճակալների ցանցը 1939 թվի հունվարի 1-ին հասցնել քաղաքներում, խորհանտեսություններում, բանվորական ավաններում և յերկաթուղու տրանսպորտում մինչև 800,000, գյուղական վայրերում՝ մինչև 500,000 և սեղոնայինները՝ մինչև 4,000,000 մահճակալի\*):

Մոռւրներն առաջին պայմաններից մեկն են մանկական մահճացությունների դեմ մղվող հաջող պայքարում: Այդ մահացությունն առանձնապես բարձը եր ցարական Ռուսաստանի բազմաթիվ վոչուռանակչության մեջ:

Մոռւրային ցանցի լայն զարգացումը ԽՍՀՄ-ում նպաստեց փոքր աղքություններին պատկանող կնոջ աղատագրմանը, հնարավորություն տվեց նրան մաս-

\*) Պրոֆ. Ն. Պրովակեր. Գրաշնկով. — «Ստալինյան հոգատարությունը մոր և մանկան մասին», «Իդլիստիա», 28/VII 1938 թիվ:

Նակից դարձնելու արտադրական աշխատանքին և  
պետության կառավարմանը:

Մայրության ու մանկության պահպանության  
գործի վրա մեզ մոտ վիթխարի միջոցներ են ծախս-  
վում:

Այսպէս, մտուրների, ծննդատների և կոնսուլ-  
տացիաների շինարարության համար խորհրդային  
եշխանությունը 1937 թվին բաց ե թողել 500 միլիոն  
ռուբլոց ավելի, իսկ մայրության ու մանկության  
պահպանության ամբողջ գործի համար՝ 1800 միլիոն  
ռուբլոց ավելի:

Մայրությունը մեզ մոտ կնոջ համար դարձել է  
մեծագույն ուրախություն ու յերջանկություն: Յե-  
շխայի ծնունդն արդեն ընտանիքին չի սպառնում  
աղքատությամբ ու քաղցով, ինչպես ցարական Ռու-  
սաստանումն եր, և ինչպես տեղի ունի այժմ կապի-  
տալիստական յերկրներում: Յերեխայի ծնունդը մեզ  
մոտ մեծ և լիակատար ուրախություն է: Այդ ու-  
րախության մասին անդադրում խոսում են խորհր-  
դային յերկրի յերջանիկ կանայք:

1936 թվին վողջ յերկրի կողմէց ընդունվեց ա-  
բորսն արգելելու, ծննդաների բժշկական ոգնու-  
թյունն ավելացնելու, բազմազավակ ընտանիքներին  
պետական ողնություն սահմանելու և ծննդատների,  
մանկամոռների ու մանկապարտեզների ցանցն ըն-  
դարձակելու վերաբերյալ պատմական որենքը:

Անցել ե 2 տարի, բայց ի՞նչ վայրուն կերպով  
են արտահայտում արդեն արդյունքները: Մոռկա-  
յում և կենինգրադում ծննդաբերությունն ավելացել  
է համարյա յերկու անգամ, Բագվում և Տաշքենդում՝

50 տոկոսով: Նույն պատկերն ե կիւռում, Մինսկում,  
Թբիլիսիում և Ֆրունզեյում:

Մեր հայրենիքի հազարավոր ընտանիքներ բազ-  
մազավակության պետական նպաստ են ստանում:  
Մորկնոջ և յերեխաների նկատմամբ այլպիսի հոգա-  
տարություն հասրավոր ե միայն սոցիալիստական  
պետության մեջ:

Բազմազավակ մայրերին ոգնելու և արորտներն  
արգելելու վերաբերյալ կառավարության գեկրետի  
հրապարակման որվանից մինչև 1938 թ. մայիսի 1-ը  
Խորհրդային Միության մեջ վճարված ե 1,357 միլիոն  
ռուբլի նպաստ:

Մայրերն ամենախորը յերախատագիտություն  
են հայտնում ընկեր Ստալինին, կուսակցությանն  
ու խորհրդային կառավարությանը՝ յերեխաների նը-  
կատմամբ ցույց տված հսկայական հոգատարության  
համար:

Յեզ դա այն ժամանակ, յերբ Փաշիստական ֆեր-  
մանիայում փակվում են ծննդատները, յերբ մահա-  
ցությունը կապիտալիստական յերկրներում աճում ե  
տարեցարի, յերբ դագաղները կապիտալիստական  
յերկրներում ավելի յեն շատացել քան որորոցները:

Խորհրդային կինը՝ սոցիալիստական մեծ յերկրի  
իրավահավասար քաղաքացին, սոցիալիզմի ակտիվ կա-  
ռուցողը, հանրոգուտ աշխատանքը զուգակցում է  
մայրության հետ:

Մեզ մոտ այժմ հիմք չկա ծննդաբերությունը  
ուսմանափակելու: Մեր յերկրի աշխատավորներին յու-  
թական բարեկցության վիթխարի աճումը, խորհրդա-  
յին առողջապահության զարգացման համար հղոր բա-

դա ստեղծելը պայմանավորեցին այնպիսի բարբձ  
ծննդաբերությունն Խորհրդավայրին Միության մեջ, վորա-  
պիսին չկա և չի կարող լինել վոչ մի կապիտալիս-  
տական յերկրում:

1937 թվին ծննդաբերությունը ԽՍՀՄ-ում՝ 1936  
թվի համեմատությամբ բարձրացել է 18 տոկոսով:

Մուկվայում 1936 թվին ծնվել է 71,037 յերե-  
խա, իսկ 1937 թվին՝ 135,848, այսինքն, համարյա-  
յերկու անգամ ավելի: Կարելիայում՝ 1937 թվի 10  
ամսվա ընթացքում՝ 4657-ով ավելի յերեխա յե ծնվել,  
քան 1936 թվի նույն ժամանակաշրջանում: Կալինի-  
նյան մարզի «Վելիկիյե Լուկի»-ում՝ 1937 թվին ծննդա-  
բերությունը 1936 թվի համեմատությամբ բարձ-  
րացել է 96 տոկոսով: Ծննդաբերության անընդհատ  
աճման նման պատկեր ե նկատվում մեր լայնածավալ  
հայրենիքի բոլոր յերկրամասերում ու մարզերում:

Ծննդաբերության աճման հետ միասին խիստ իշել  
ե ինչպես ընդհանուր, այնպես ել մանկական մահա-  
ցությունը: 1913 թվին մահացությունը մեծ թվերի  
յեր հասնում՝ 1000 մարդուն 28 մահ: Բոլոր յերեխա-  
ների մեկ քառորդից ավելին մինչև ենդափոխությու-  
նը մեռնում եր կյանքի առաջին տարում:

Բնակչության մահացությունը ԽՍՀՄ-ում՝ 1913  
թվի համեմատությամբ իշել է 46 տոկոսով, իսկ ման-  
կականը՝ գրեթե յերկու անգամ: Հարյուր տարուց ա-  
վելի պահանջման ԱՄՆ-ին, Ֆրանսիային ու Ճապո-  
նիային, վորպեսզի հասնեն մահացության իջեցման  
այդպիսի տոկոսի: Մուկվայում և Լենինգրադում մա-  
հացությունը կրճատվել է 2,5 անգամ:

Նշանակալից ե մահացության իջեցումն ազգա-

յին հանրապետություններում: Այսպիս որինակ, Թա-  
թարիայում մինչեղափոխական տարիների համեմա-  
տությամբ մահացությունն իջել է 55,7 տոկոսով,  
Ուգանդայում՝ 56,6 տոկոսով, Մոլդավիայում՝ 48,4  
տոկոսով, Զովլաշիայում՝ 61,9 տոկոսով, Կոմի մար-  
զում՝ 58,3 տոկոսով:

Բարձր ծնելիությունը մահացության խոշոր  
նվազման հետ վորոշում և բնակչության արագ աճը:  
Այսպես, յեթե 1913 թ. բնակչության աճը Մուկվա-  
յում կազմում եր յուրաքանչյուր հազար բնակչին  
7,6 մարդ, ապա 1936 թվին աճը կազմում է 21,6  
մարդ, այսինքն՝ համարյա 3 անգամ ավելի:

Բնակչության աճը ԽՍՀՄ վերջին տարիների  
ընթացքում կազմում և տարեկան մոտ 3 միլիոն  
մարդ, այն ժամանակ, յերբ Յեվրոպայի 24 կապիտա-  
լիստական յերկրներում, 400 միլիոն բնակչով, տարե-  
կան բնական աճն ընդհանուր հաշվով գգալիորեն փոքր  
է այդ թվից: Վերջին տարիների ընթացքում բնակ-  
չության աճը ԽՍՀՄ-ում նշանակելիորեն մեծացել է:

ԽՍՀՄ այցելած ֆրանսիական հանրապետության  
առողջապահության մինիստր պ. Ռյուկարն այսպես  
արտահայտվեց մայրության պահպանության մասին  
մեր յերկրում:

«Զեղ մոտ մայրությանը ցույց ե տրվում ամեն  
տեսակի ոգնություն, վորը հսկայական քաղաքական  
նշանակություն և ստանում: Դուք վոչ միայն լայն  
եք գրել մորը ցույց տրվող ոգնությունը, այլև ամեն  
ինչ անում եք նրա համար, վորպեսզի նաև վորակա-  
պես այդ ոգնությունը լիովին հասնի իր նպատակին:  
Սրանով յես հավաստում եմ, վոր դուք վերին աստի-  
ճանի մարդասիրաբար եք վարդում»:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ԻՐԱՎԱԿԱՐԳԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Անվիճելիորեն մեծ են խորհրդային առողջապահության նվաճումները: Այդ նվաճումները կարող ելին ել ավելի մեծ լինել յեթե չլիներ առողջապահական մարմիններում գործող, այժմ մերկացված, ժողովրդի թշնամիների ֆասարար գործունելությունը:

Սոցիալիստական իրավակարգը ժողովրդական առողջության պահպանության գործը հասցրեց այնպիսի բարձրության, վորապիսին մատչելի չե աշխարհի վոչ մի կապիտալիստական յերկրի:

Միայն խորհրդային յերկրություն և ապահովված զիտության իրական ծագկումը: Գիտական ինստիտուտների համար ԽՍՀՄ-ում հրաշալի շենքեր—պալատներ են կառուցում: Գիտական կադրերն ամեն տարի լրացվում են խորհրդային յերիտասարդության հարյուրավոր ու հազարավոր ներկայացուցիչներով: Տարեցարի ամրանում և աճում ե ԽՍՀՄ-ում գիտական աշխատանքների բազան, ավելանում ե գիտական աշխատողների թիվը, աճում ե յերիտասարդ ասպիրանտների քանակը:

Բժշկական գիտությունն իր զարգացման համար բոլոր պայմաններն ստացավ միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո:

Ցարական Ռուսաստանում ըժշկական գիտությունը հալածված վիճակում եր գտնվում:

ԽՍՀՄ-ում կան 300-ից ավելի բժշկական գիտահետազոտական ինստիտուտներ: Նրանցում աշխատում են մինչև 8000 գիտական աշխատողներ:

Ցարական Ռուսաստանի յերբեմնի հետամնաց ազգային ծայրամասերում մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը վոչ միայն չկային գիտական կենտրոններ, այլև պրակտիկ բըժժիշների թիվը միավորներով եր հաշվում: Այժմ այստեղ, յեղացրական միութենական հանրապետություններում կա գիտահետազոտական ինստուտների նշանակալի ցանց:

Մեր գիտությունն առաջ է քաշել մի շարք խոչշորագույն գիտնականների, վորոնց անունները հայտնի յնս ամբողջ աշխարհին: Բավական և նշել ակադեմիկոս Ա. Ա. Բոգոմոլցին, շքանշանակիր պրոֆեսոր Ն. Ն. Բուրգենկոյին, Վ. Պ. Ֆիլատովին և շատ ուրիշների: Խորհրդային գիտնականների այդ անունները մեծ ժողովրդականություն են վայելում աշխատավորական լայն մասսաների մեջ: 1937 թիվ գեկտեմբերի 12-ի պատմական որը մեր ժողովուրդը փորպես իր գեպուտատի ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ և ուղարկել շատ գիտնական բժիշկների: Յեկաման միութենական ու ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների գեպուտատների թվում կան բժշկական գիտության լավագույն մարդկանց անուններ՝ պրոֆեսորներ կիրայել, բերիտաշվիլի, Երիսթավիկի և ուրիշները:

Խորհրդային կառավարության կողմէց բժշկական գիտության զարգացման գործին հատկացրած բացառիկ ուշագրության ցուցանիշներից մեկը հան-

գիտանում են այն հսկայական հատկացումները, վորապիսիք բաց են թողնվում գիտական բժշկական հիմնարկների և ինստիտուտների պահպանման ու շինարարության համար:

1937 թվին գիտական բժշկական հիմնարկների շինարարության համար տասն անգամ ավելի յև բաց թողնված, քան 1934 թվին: Այդ հատկացումներն արտահայտվում են հարցուրանվոր միջին սուբյեներով:

Միայն սոցիալիստական յերկրի ուժերը ներեցին կազմակերպել այնպիսի վիթխարի գիտահետազոտական հիմնարկ, ինչպիսին ե Եքսպերիմենտալ բժշկականության Համամիջութենական ինստիտուտը, վորի խնդիրն ե մարդու սրբանիզմի բազմակողմանի ուսումնասիրությունը:

Փայլուն հեռակարներ են բացված խորհրդային բժշկական գիտության առաջ, բժշկական բարձրագույն գործոցի առաջ:

Մեզ հարկավոր ե գիտություն «վորն իր հին ու ճանաչված զեկավարներին թույլ չի տալիս ինքնազոհ կերպով պարփակվել գիտության բուրմերի կեղեւի մեջ, գիտության մոնոպոլիսաների կեղեւի մեջ, վորը հասկանում ե գիտության յերիտասարդ աշխատողների հետ գիտության հին աշխատողների դաշինքի իմաստը, նշանակությունը, ամենազորությունը, վորը գիտության բոլոր գոները կամավոր կերպով ու հաճույքով բաց ե անում մեր յերկրի յերիտասարդ ուժերի առաջ և հնարավորություն ե տալիս նրանց նվաճելու գիտության բարձունքները, վորն ընդունում ե, վոր ապագան պատկանում ե գիտության յերիտասարդությանը» (Ստալին):

Առողջապահական մարմինների մեջ սողոսկած,

այժմ մերկացված, ժողովրդի թշնամիները փորձում ենին խանգարել լայն առողջապահական ձեռնարկումների կիրառումը և արգելակել մեր պայքարը վարակիչ հիվանդությունների դեմ:

Եպիդեմիոլոգիայի և պրոֆիլակտիկայի հարցերի նկատմամբ՝ հարկ յեղած ուշադրության բացակայությունը թուլացրեց պայքարն ինֆեկցիոն հիվանդությունների, առանձնապես պարագիտար տիֆերի դեմ:

Վատանգի տակ գնելով բանվորների և նրանց ընտանիքների առողջությունն ու կյանքը, ժողովրդի թշնամիները՝ արոցկիստական-բուխարինական բանդիտները բանվորական ավաններն ու բանվորների բնակելի տները տեղափորում ելին սանիտարական տեսակետց վտանգավոր արտադրություններին անմիջապես մոտ, գիտակցաբար գեպի քայքայումն ելին տանում սանիտարական կազմակերպությունը:

Վորապես վնասարարության հետևանք, մենք ունենք սանիտարական կազմակերպության վոչ բավարար ապահովություն կազմերով, այդ կազմերի պատրաստման կրածառում, սանիտարական նշանակություն ունեցող շատ կարևոր որյեկտների շինարարության կոնսերվացիա:

Ժողովրդի թշնամիներն առողջապահական մարմիններում իրենց տարած վնասարարական աշխատանքով գիտավորյալ կերպով թուլացրեն բժշկական ցանցը: Նրանք քայքայեցին բժշկա-բուժաբանական և բուժակային տեղամասերի ու հիվանդանոցների նյութական բազան: Գյուղական բժշկական ու բուժակային կազմերի մասին վատ հոգատարությունը հասցրեց այն բանին, վոր նրանք չելին ամրանում

տեղամասերում։ առանձին շրջաններում բժշկական տեղամասերը գրեթե ամայացել է յին։

ՈԽՖՍՀ Գերագույն Խորհրդի առաջին սեսիայում առողջապահության ժողովրդական կոմիսարիատի գործունելությունը յենթարկվեց միանգամայն ճիշտ՝ բոլշևիկյան սուր քննադատության։

Վնասարարության սոսոր մեթոդներից մեկն առողջապահական մարմիններում հանդիսանում եր ձեռնարկություններում յեղած լավագույն առկայան ների լիկվիդացիան։

Մեծագույն պատմական փաստաթղթի իրացումը, ինչպիսին ե աբորտներն արգելելու, մոռւրները, ծննդատները և մայլության ու մանկության պահպանության մյոււնիմարկներն ընդարձակելու վերաբերյալ ԽՍՀՄ ժողովակոմիտեի 1936 թվի հունիսի 27-ի գեկիրեւը, առողկոմատի նախկին զեկավարության գործունելությամբ հարգածի տակ եր դրված, քանի վոր մայրության և մանկության պահպանության հիմնարկների շինարարությունը մի քանի մարզերում վիժեցրած եր։

Տրոցկիստական-բուխարինական ֆաշիստների բանդան, վորը գործում եր առողջապահական մարմիններում, մեծ վնաս հասցրեց նաև կապիտալ շինարարությանը։ Ռւժերի ու միջոցների փոշիացումը, վնասարարական պլաններն ու նախահաշիվները շատ ավելի կասեցրին ընդհանուր և դեկրետային շինարարության տեմպերն ու վորակը։

Միանգամայն անտեսվում եր սանիտարական լուսավորությունը, վորպես հզոր միջոցներից մեկը հիվանդացման դեմ մղվող պայքարում։

Ժողովրդի թշնամիներին չհաջողվեց զլուխ բերել

իրենց վնասարարական պլանները։ Նրանց գագրելի դիտավորությունները բացված են պահանձալի ներքործողիում կողմից։ Սակայն վնասարարության հետևանքները գեռես լիովին չեն վերացված։

Կուռակցությունն ու կառավարությունն ստեղծել են բոլոր անհրաժեշտ պայմաններն առողջապահության ամենաարագ վերելքի համար։ Բժշկական աշխատողների և հասարակայնության ջանքերով ամենակարև ժամանակամիջոցում պետք ե վերացվեն վնասարարության բոլոր հետևանքները։

«Մենք ուզում ենք, — ասաց խորհրդային կառավարության գլուխ ընկեր Մոլոտովը խորհուրդների 7-րդ համագումարում, — վորպեսզի առողջապահության գործն ավելի արագ առաջ շարժվի, վորպեսզի աշխատավորների առողջությունն ամրանա և վորպեսզի մեզ մոտ ե'լ ավելի շատ ծննին խորհրդային հերոսներ»։

Մտալինյան Սահմանադրության մեջ—մեր գարագանի, այդ մեծագույն պատմական փաստաթղթի մեջ—աշխատավորների և նրանց առողջության նըկամումը հոգատարությունը։ Զկա աշխարհում մի յերկիր, վորտեղ այնքան ուշադրություն և հոգատարություն ցուցարկվի գեղի ժողովրդի առողջությունը, ինչպես ԽՍՀՄ-ում։

Խորհրդային ժողովությոն սրինական հպարտության զգացմունքով և գնահատում 20 տարվա ընթացքում իր անցած ուղին։

Մտալինյան յերրորդ հնդամյակն ե'լ ավելի մեծ բարգավաճում կտա առողջապահությանը մեր սոցիալիստական իրավակարգի պայմաններում։

Մեր յերկրի աշխատավորները համոզվեցին սռցիալիստական իրավակարգի հսկայական առավելությունների մեջ։ Այդ իրավակարգն ապահովում է նրանց համար առողջ, կուլտուրական, առույգ ու բերկրագլի կյանք։

Սոցիալիզմի յերկրի բանվորները, գյուղացիներն  
ու ինտելիգենցիան հսկայական հաղթանակներով,  
վիթխարի նվաճումներով դիմավորեցին խորհրդային  
իշխանության 20-ամյակը:

Յեվ այդ նվաճումների ամենավառ արտահայտությունը հանդիսանում է մարզկության լավագույն յերազանքները՝ մարմնացնող Ստալինյան Սահմանադրությունը, վորք վավերացրելե այն բոլորը, ինչ ձեռք և բերված 20 տարվա ընթացքում իրենց յերջանկության համար, ուրախ, առողջ կյանքի համար, աշխատանքի, հանգստի, ապահովված գոյության համար, իրենց յերեխաների լուսավոր ապագայի համար՝ միւնխավոր մարզկանց անձնագործ պարբարի միջոցով:

Սատլինյան Սահմանադրության ձառագայթներով ջերմացած մեր յերկրի աղատ ու անկախ ժողովուրդները հսկայական քայլերով գնում են զեղապես կուլտուրական և ունկոր կյանքի բարձրունքները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ստալինյան Սահմանադրությունը	և հոգատարությունը	մարդկության համար
դու և նրա առողջության մասին.	.	.
Կապիտալիզմը և ժողովրդական առողջությունը	.	.
Աշխատանքի իրավունքը մեղ մոտ և նրանց մոտ	.	.
Հանգստի իրավունքը մեղ մոտ և նրանց մոտ	.	.
Ծերության ժամանակ, անշխատունակության և հիփանդության գեղագում ապահովության իրավունքը ԽՍՀՄ-ում և կապիտալիզմի յերկրներում	.	.
Ծերությունը մեղ մոտ և նրանց մոտ	.	.
Հոգատարություն անօղ սերնդի մասին	.	.
Մայր-կնոջ և մանկան պահպանությունը	.	.
Ժողովրդական առողջության պահպանությունը և սոցիալիստական իրավակարգի հաղթանակը ԽՍՀՄ-ում	.	.



430

3534

ԳԻՒԾ 35 Կ

Д.Р. Л. О. КАНЕВСКИЙ  
**Охрана здоровья трудящихся**  
в стране Советов  
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.